

Շատ երախտագէտ եմ ձեզի որ ինծի զրկեցիք այդ զեղեցիկ գիրքը, և կը խնդրեմ որ ընդունիք իմ գրական մեծ համակրութեան զգացումներս:

ԺԻՒԼԻԷՔ ԱՆՃՈՒՄ ՏՕԴԵ

Փարիզ դառնալով՝ կը գտնեմ հատորը զոր ինծի ուղարկելու պատիւն ու հաճողքն բերեւ էք: Չեր ոտանաւորները զմայելի են, իս զանոնք կը դասեմ ամենէն անկեղծ, ամենէն գորոզվազին, ամենէն փայլիչ սիրով ստղծուած քով՝ զոր գիտեմ, շատ մօտ՝ օրինակի համար գրեթէ ֆիի և Հայնէի տաղերուն, զոր կը պաշտեմ նոյնպէս: Չեր վիրաւոր, ջախջախուած, արիւնլուայ հայրենիքին նուիրուած եղերբները զիս յուզեցին: Այո՛, խօսեցէք անոր մասին, և երգեցէք զայն անգգամ լուսթեանը մէջ Եւրոպային որ զայն կը դիտէ, անոր մարտիրոսութիւնը կը տեսնէ և բան մը չ'ընէր:

ԺԱՆ ԼԱՆՕԻ



ԾՈՎԱՅԻՆ ԶԱՄԲՈՒՄ ՍԵՒԸ

Գրիշ, խաղաղ ու անգործ գրչեր, զոր կը փնտռէի ի վաղուց՝ կեանքիս երկար յոգնութիւնն առնելու: Հիմայ այդ հմայիչ գրչերը՝ շոգենաւին մէջ յունական Մուսաներուն բնակարանաց ոտքին ստորուոր կը գտնեմ, Պառնասի ասիւնքը: Վպասեցի որ բոլոր ճամբորդները առանձնապէս դադրեցնելով գրչերային լուսթիւնը պղծող խնտութիւններ և աղաղակները և ես լուսթեան և առանձնութեան մէջ վայելեմ այս խաղաղ գրչերը:

Երկինքս, որուն ամբողջ կիսաբոլորը ձախկողով խաղաղ շուրջ կը համբուրէ՝ անամպ է. լուսինը անթարթ՝ հանդարտ ծովը կը դիտէ իր ներքե թափելով արծաթեայ հեղեղը՝ որ կու գայ մինչև շոգենաւին կողքին զարնուելու. իսկ ամսմողը երկնային գմբեթին մէջ՝ ինքը՝ լուսինն է որ նազելի քող մը կը ձգէ, և որ կ'արգիլէ աստղերուն խորհրդաւոր նայուածքը:

Ծովը լուսաւոր սևութիւն մ'առած է լուսնին նայուածքին տակ և այնքան խաղաղութիւնը սիրած է՝ որ հեռուէն կը սկսի դողդող նախազգալով որ անհոգ հրէշ մը կը վազէ իր խաղաղութիւնը վրդովելու. և անա անդորր ծովը երբ կը ճեղքուի մեր նաւուն ցուկկով՝ կ'ողբայ անաղաղաբ իր վրէ՛ վրէ՛ ձայնով և սպիտակ յորձանքի կ'արտաւտէ որ ի՞նչ հեռանաք երբեք մեր մօտէն:

Աշակողմ կը բարձրանան լեռներ՝ որոնք իւրաւոր հետ կապուած՝ իրենց ուղքին տակ մրմնւնէր ալիքներուն խօտածքը կ'ուզեն մտիկ ընել: Լուսն ևս ասոնք ալ, լուսթեան մէջ ծնած, իւրենց վեհ կեցուածքը և խորհրդաւորութիւնը կը հաւատացնեն ինձ թէ ասոնց ծայրը կ'ապրին մուսները:

Հետաքրքիր եմ, ալիքները որ այս ամայի լեռներուն գիշին կը զարնուին և որոնք կարծես կը ճգնին մինչև վեր բարձրանալ, ինչ կը գտնեն արդեօք ասոնց պատմելու: Հետաւոր աշխարհներու օրական հանդիպատմութիւններով՝ Աստուծոյ իրեն շնորհած սրբազնութիւնը կը պղծեն, թէ արդեօք ճամբորդներու հրճուելիք ու ցաւը պատմելու կ'ընթանա:

— «Գրիշ, ո՛ր խորհրդաւորութիւնը ո՛րքան զեղեցիկութիւնը կ'առաւելու. դուն ո՛վ սրբազան գրչեր հայելին ես Անցեալ երկար օրուան՝ զոր ստեղծած էր Աստուած մարդկային ստեղծագործութեանն առաջ, Գուն ո՛վ գրչեր չար էիր Աստուծոյ համար, նա քեզմէ բարի լոյսը ստեղծեց իբրև ամենամեծ նուէր մը մարդկութեան. ու երբ ես այսօր այդ լոյսին բյուրեղիւնը չեմ զգար՝ անա հիմայ դուն ինձ հայելի մը կ'ըլլաս մնացած Արարչագործութեան զարեւն ի վեր և քու մէջ կը նշմարեմ այն անաբաւ լոյսը՝ զոր վայելեց հախաժարողը երբ Աստուծոյ շնչոյն դիմաց աչքերը բացաւ: Վաղն այդ լոյսը կ'ուզեմ...»:

Իմ իղճերս գրչերային թագուհւոյն ուղղեցի որ կրնար թարգմանը ըլլալ իմ և գրչերին մէջ: Լուսինն կարծես հիմայ իր նայուածքը շոգենաւին վրայ ուղղեց իր անխօսուն լեզուով ինձ հասկցնելու համար թէ լոյսը պէտք է իմ մօտ փառնուի. և հիմայ աչքերս կը քայեմ իրմէ, կը հեռացնեմ աստղերէն ու լեռներէն և շոգենաւին մէջ շրջան մը կ'ընեմ հոն դիտելու Գրչերը:

Ո՛ր մօտենամ, անա իմ մօտիկ, նայուածքիս շատ մօտիկ մարդկութիւն մը. գաղթականանելու խառնեղանդանք մը որ կը քնանայ: (Որուան մէջ շատ զբաղեցայ մարդկային այս թշուառ պատկերով. անա երկու հարիւր հոգւոյ չափ թշուառներ՝ որք կեանքին վայելքը գրիւնք մայեցնող աշխատութեան մէջ գտած են. ասոնք չորս տանն երջանիկ են՝ երբ վիշտ չունին, երբ կը դարդին աշխատութեան և այդ ժամը Գրչերին մէջ կը գտնեն իբր աստղերուն տակ հանգիստ երջանիկ: Գարշելի բուրում մը իրենց կերած սօխին և սխտորին հետ թառուեալով՝ գրիւնք շրջապատած են՝ Պատուաւած ծածկոց մը՝ երեք չորս հոգի միասին ծածկելու սահմանուած է, ուսկից բնականաբար դուրս կը մնան կամ ձեռքեր կամ ոտքեր: Նայր կը հոն յոգնած ձեռքը բարձ կուտայ զաւակաց, մայր մը իր զգեստին կէտով որդին ուզած է ծածկել. ուրիշներ զորիկ մնացած են նաև այս պատուաւած ծածկոցներէն:

«Ո՛վ թշուառ մարդկութիւն, սև գիծ մարդկութեան պատկերին. դուք կ'ապրիք թշուառ, արհամարհուած, վառն գի ապրպէս ծնաք, և այդպէս ալ պիտի թաղուիք»:

Այս վայրկեանն մտաց դիմաց կշիռի մը եւ

րեւոյթը առաւ շոգինաւը որուն նժարը կախուած էր լուսնէն, այն թաթը ուր թշուառ մարդկու- թիւնը կար վարը, խորը, մութին մէջ կը մնար. իսկ միւս թաթը ուր հարուստներ կային՝ վերը լուսոյ մէջ էր։ Անգամ մ'ալ նայեցայ վեր, լուսնին և հարցուցի թէ ո՞վ պիտի ըլլայ ան՝ որ այս կշիռին երկու թաթերը հաւասարեցնէ։

— «Մարդկային արդարութիւնը», պատաս- խանեց ան։

*

Բացօթեայ պատկողներուն մէջ նշմարեցի պա- տանի մը որ այլալիւծ գլուխը գետնէն վեր հա- նեց սարսափած. «պահով՝ առեկի երազ մը գինքը արթնեցած էր, և որ ասքերը լուսնին դիմաց չփեղով ոտքի ելաւ և կամաց կամաց ճե- մել սկսաւ, երբեմն երկչոտ նայուածքը նաւապե- տին ուղղելով։ Ես կարեւորութիւն չտուի անոր և միաբն նորէն սեւեռեցի լուսնին և աստղերուն, որոնք իրենց լուսնեամբ շատ բաներ կ'ըսէին ինծի և ես ազգերու բովանդակ ճակատագիրը անոնց մէջ կը կարդայի և Հայրենեաց սատղե- րը, սէ, կարմիր կը տեսնէի։

Եղաւ բոլակ մը որ սթափեցայ և ինծի մօտիկ տեսայ պատանին նոյն երկչոտ նայուածքով և որ գլուխը կէտ մը կախ ինծի նայեցաւ լուռ, տարապէսի գծերով դէմքին վրայ։ Ես ալ իրեն պէս սթափեցայ չեչտով մը խալերէն հարցու- ցի «Ո՞վ ես?» Ամբողջ մարմինս սարսուռ ելր ան ոչ մի պատասխան չտուաւ. անոր լուսնիւնը զիտ տանջեց և յանձիմանեց թէ ի՞նչպէս եւրո- պացի կը կարծեմ համեստ, աղքատ և երկչոտ պատանին։ Նոյն սարսուռով հարցուցի մայրենի լեզուով «Ո՞վ ես?» Տեսայ արցունքով որ պա- տանիին աչքերը լեցունեցան, ան գինքը լուռ պա- հող շունչը կլլեց և շրտաւ «Հայ եմ»։ «Այ տանայէն կու գամ» րտաւ ու գիտ հարուածեց։

Ահ, ես ի՞նչպէս այսքան ատեն չէի նշմարած արիւնը անոր աչքերուն մէջ։ Կրակի, ոճիրի, թալանի երկրէն կու գար. այն երկրէն՝ որ լա- ցուց գմբէ երկար օրեր, միւր ամենէն երջանիկ օրերուն։ և որքան զառն է եղեր այն արցունքը վշտի և ցաւի՝ որ զուարթ սրտէն կը քամուի։

Ատանայէն կու գայ. բոցերը, հրացաններու շաշիւնները, առեկի ոճիրները, արիւնը իրեն- ներուն, դիակը իր ծնողաց, ողբերը վիրաւո- րուածներու, հառաչները հոգեվարքներու, այս ամէնքը իր մէջ տողորուած են, այս ամէնքը տակաւին իր հետ կը կրէ պատանին. հիւսիս ծո- վուն շուրջ արին կը դառնայ աչքիս, երկնօրիս բոլոր աստղերը կը կարմրին, շոգնաւին լոյսը հրդեհէ կը փոխուի, սա վայրը պատկողները դիակներ կը թուին, և շոգնաւը կարծես կը կքի այս ծանր մտածութիւններու տակ։ Ես որ պատկերի մը դիմաց այսքան կը խորանուիմ, իրականութեան դիմաց սա պատանին ի՞նչպէս կ'ապրի։ Ապահովապէս այս ամէն մանրամաս- նութիւնը զինքը կը հիւծեն, և վստահ եմ որ փշիւրը երազին մէջ մի քանի անգամ հանդիսա- տես կ'ըլլայ այս վայրագ արարքներուն և տա- ր-

սափով վեր կը վերցնէ գլուխը իր ձեռքէ բար- ձէն։

— Ատանայէն կու գաս։ — Այո, պատաս- խանեց և արցունքի կաթիլներ տահեցան գու- նատ այտերէն վար. և ես անգթութիւն համա- րեցի այդ աւելուած երկրին մասին և և է հայր- ցում մ'ընելը։

— Դեպ ի հօր կ'երթաս։

— Հոգս, հոն տանիկ չկայ, չէ։

— Ահ, չէ։ Ո՞վ կը զրկէ գրեզ հոն։

— Թէրգեան Գերապայածառը. — և նորէն այ- քերը լեցունեցան. գուշակեցի որ այս վայրկենիս անոր առջև պատկերուեցաւ քաջարի Եպիսկո- պոսին իրականացած վսեմ գաղափարին այ- րուիլը...

Պատանին շարունակեց։

— Տակաւին վարը երկու հայ ընտանիքներ կան։

— Անոնք ալ Հոռմ կ'երթան։

— Ոչ, անոնք Նաբոլի կ'երթան Ամերիկա մեկնելու համար։

«Ուրիշներ (սմանան և երկին Սահմանադրու- թենէն շլացած դէպ ի իրենց օճախը կը վերա- դառնան, ասոնք միևնոյն ժամանակ Ամերիկա կ'երթան բախտին հետ կուգելու։ Ըսել է ոչ մի բովայն իրենց երկնքին վրայ արեւ չեն տեսած այդ թշուառները և չեմ ալ գիտեր թէ օտար երկին- քը արեւ ունի՝ ասոնց համար։ Զիրենք համոզել շանալը որ ետ դառնան՝ շարունակէն մ'է այս վայրկենիս, թող գէթ պատրանքի յուսով ժու- պոսին այդ տխուր դէմքերը մինչև որ իրականու- թիւնը փոխանակուի»։ Կը խորհողածէի ես աչքերս գետին յառած։ Ու երբ գլուխս վեր վերցուցի ու պատանին նայեցայ՝ անիկա պաղաւտակն չեչտով մը խնդրեց ինձմէ։

— Երթամ գրեթե ալ կ'անչեմ։

— Այ, ոչ թող հանգիստ քնանան Ամերիկան երազելով, Արշալոյսին կը տեսնուինք. «Գիշերն արդէն իր սեւ ունի» խորհողածեցի։

Հ. Մ. Պոստոլսկու

Պուշկարիս շոգնաւ

Յուլիս 10/23

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Բարոյական, Ռատմական, Արտեստական

— Իր տարի 1909. — Բաժանորդագրու-

թեան պայմանները՝ Տարեկան 15 Ֆր.

ոսկի. 6 րբ.։ Վեցամսեայ՝ 8 Ֆր. ոսկի.

3 րբ.։ Մէկ թիւ կ'արժէ 1,50 Ֆր. 70 Կ.։

Հ ա ս ց է Rédaction de la Revue
«Handes» VII/2 Mechitharistengas-
se 4 Vienne (Autriche)